ՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՌԱԴԻՈՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ
ՈՀԱՂՈՐԴՄԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ

621
Ծ- 98

# ԾՐԱԳԻՐ

ՄՈՐՁԵԻ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԼՍՈՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲԱՆԱԼԻՈՎ ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ ЭКЗЕМПЛЯР

ТССР довлет китапханасы
ГОСБИБЛИОТЕКА ТССР
Инв. № 2273

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՌԱԴԻՈԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆ 1940

621
Ծ-98

Պատ. խմբագիր Ս. Զոքանյան
Տեխ. խմբագիր և սրբագրիչ Վ. Խաչատրյան

ՎՖ3264, պատվեր 920, տիրաժ 500

Հանձնված է արտադրության 2/X 1940 թ.
Ստորագրված է տպագրության 15/X 1940 թ.

ՀՍՍՌ ԺԿՍ-ին կից թերթերի և ամսագրերի տպարան, Երևան.

30 JUL 2010

«Հաստատում եմ»
Համամիութենական ռադիոկոմիտեի
նախագահի տեղակալ
ԲԵՐԴՈՎ Ս. Մ.
20 փետրվարի 1940 թ.

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՄՈՐԶԵԻ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԼՍՈՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲԱՆԱԼԻՈՎ ՌԱԴԻՈՍԻՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

*ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄԸ.—Պատրաստել ռադիոօպերատորներ, որոնք կարողանան ընդունել տառային և թվային բնագիր (տեքստ) մի րոպեյում 40—50 նիշի արագությամբ։*

## *ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ*

*Լսողությամբ ընդունելու և բանալու վրա տարվող աշխատանքի ծրագիրը նախատեսնում է անցնել հիմնական բաժիններ (ընդունում, հաղորդում), լսողին անհրաժեշտ հետևողական օպերատիվ հմտություն մշակել, որպեսզի տանը և դասարանում ինքնուրույն աշխատանք կատարի։ Ուսման ժամերի ընդհանուր քանակը (105 ժամ) վերցված է խմբակային պարապմունքների համար յոթնօրյակում ոչ պակաս 3 անգամից, 2-ական ժամի չափով (դասընթացի տևողությունը 3—5 ամսի չափով)։*

15 MAY 2013

9662

Ուսման ժամերի մոտավոր դասավորությունը ըստ ծրագրի բաժինների և ընդունման արագությունը ըստուգող գրաֆիկը տրվում է ծրագրի հավելվածում։

Խմբակի ղեկավարները ելնելով լսողների ընդհանուր պատրաստականությունից կարող են անհրաժեշտ փոփոխություններ մտցնել հետևելով մյուս ցուցանիշներին և պահպանելով իհարկե Մորզեի այբուբենի հետևողականորեն դասավանդման սկզբունքը։

Ուսուցման առաջին ամսում հիմնական ուշադրությունը դարձվում է բանալու և բանալին բռնելու տեխնիկայի վրա։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԸ— ՁԱՅՆԱԿԱՆ (ՏՈՆԱՅԻՆ) ԽՄԲԱԿԱՅԻՆ— ՄԵԹՈԴ

Ձայնական մեթոդը կայանում է նրանում, որ լսողները սկզբից բանալու պարապ հարվածներով, իսկ հետագայում ստուգելով ականջակալների օգնությամբ ընդօրինակեն վարժությունը, որը հաղորդվում է հրահանգչի ձեռքով (կամ ավտոմատով)։ Այդ դեպքում բարձրախոսը փոխարինում է հաշվարկին, իսկ հրահանգչի դերն այն է, որ նա հսկի լսողների աշխատանքը և միաժամանակ թույլ տված սխալները ժամանակին ուղղի։

Տակտի ավելի ճիշտ յուրացման համար սկզբնական վարժություններում ձեռքի շարժման մեջ (կետ-գիծ) կարելի է օգտվել հաշվելու մեթոդից (հարկ եղած դեպքում)։

Ռիթմիկ հաշվումը այն է, որ լսողները հմտություն են ձեռք բերում ճշտությամբ տարբերելու դադարները (պաուզաները) և պաշտպանել հավասարա-



ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР

42757-63

չափություն (երկարատև) սեղմումը գիծ (տիրե) նշանի վրա։ Բացի այդ, ռիթմի և թափի զարգացումը անհրաժեշտ է նրա համար, որպեսզի հմտություն ձեռք բերել հետագայում (արագացրած) հաղորդման տեխնիկային տիրապետելու։

Պարապմունքների ամբողջ ընթացքում հրահանգչի ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն ուսանողի ձեռքի դիրքը բանալու վրա, ձեռքի դաստակի շարժումը, նստվածքի ճշտությունը և այլն։

Այն դասարանը, որտեղ տարվելու են պարապմունքները, պետք է լրիվ կերպով կահավորված լինի համապատասխան պարապմունքների մեթոդի պահանջների, բանալիները ամրացվում են սեղաններին, իրարից 60—70 սանտիմետրից ոչ պակաս հեռավորության վրա։

Սեղանների վրա էլեկտրոլարերի անցկացման սխեման պետք է կատարվի այնպես, որպեսզի հնարավոր լինի իրագործել 4 հիմնական փոփոխություններ (վարիանտներ), այսինքն աշխատանքը լսվում է (հաղորդող) «իր համար», մասսայական լսողություն հրահանգչին (շրջաբերականի ընդունում), զույգային աշխատանք և աշխատանքը (փոխանցումը) ցանցում, որը բաղկացած է 3—4 բանալիներից։ Սեղանների բարձրությունը չպետք է անցնի 80 սանտիմետրից։ Բացի դրանից դասարանի կահավորման մեջ պետք է մտնեն՝ ձայնական հաճախականության գեներատոր—2 հատ, ռադիո-ընդունիչ (ցանկալի է կարճ և երկար ալիքների), տրանսմիտտեր (փոխհաղորդիչ) և տարբեր տեսակի աղյուսակներ, Մորզեի այբուբենի Q և Z կոդեր, ժարգոններ և այլն։

Ծրագրի լսողությամբ ընդունման բաժնում պարապմունքի հիմնական ձևը հանդիսանում է տառերի ձայնական դասավորության մեթոդը՝ կոմպլեքսային (խտացրած) տառերի, հնչունաձայների, ազդանշանների, թվերի, կետադրության նշանների և այլն։

Լսողների ուշադրությունը պետք է բևեռել հընչյունների (ձայնի) եղանակի վրա և ազդանշանների հնչունականության տարբերիչ բնագծերի վրա։

Տառային ազդանշանների հնչունականության արագությունը պետք է այնպես դասավորել, որ լսողը չկարողանա իրեն պատկերացնել դիտողությամբ և տարբերի գիծը, կետը, թղթի վրա նկարելու ձևով։

Տառերի հնչողությունը (ձայնը) ուղեկցվում է պարբերաբար նրանց կանչով (անունով) աղյուսակի մշակման սկզբնական շրջանի ամբողջ տևողության ընթացքում։ Մեկ րոպեում հաղորդվող տառերի քանակությունը չպետք է անցնի 20—25 տառից (ուսման առաջին ամսում)։

Պարապմունքների ընթացքում հրահանգիչը սիստեմատիկորեն ստուգում է օպերատիվային դրության պահպանումը և բոլոր տեսակի շեղումների դեպքում լսողների հետ անց է կացնում լրացուցիչ բացատրություններ և զրույցներ։

Յուրաքանչյուր լսողի առաջադիմության հաշվառման լավ դրվածքը հանդիսանում է աշխատանքի լուրջ հանգամանքներից մեկը։

Հաշվառումը տալիս է յուր խմբակի առաջադիմության պարզ պատկերը, ցույց է տալիս հրահանգչի աշխատանքի բաց կողմերը և օգնում է խմբակին ամբողջությամբ պայքարել լավագույն ակադեմիական ցուցանիշների համար։



Պարապմունքների ամբողջ տևողության ընթացքում խորհուրդ է տրվում լսողների ուշադրությունը կենտրոնացնել այն հանգամանքի վրա, որ նրանց համար այդ հանդիսանում է նպատակադրում հետագայում կապի ապարատում աշխատելու համար։

### Գրականություն

„Учебник красноармейца—радиста“ 1939 г.

Ծանոթություն.— *Ներկա ծրագրի ուսուցումը հեռակա ձևով անցկացման համար պարապմունքների թեմաները հիմնական բաժիններով (ընդունում, հաղորդում) սեղմվում է (ըստ ծավալի) և փոխարինվում է (հերթականության ձևով), ելնելով ամբողջ ուսուցման ժամերի ընդհանուր քանակից։*

## Բ) ԾՐԱԳԻՐ

### Ուսման 1-ին ամիս— 20 ժամ.

1-ԻՆ ԴԱՍ.— Ներածական զրույց։ Համառոտ ծանոթացում ռադիոօպերատորի դերի հետ։ Ռադիոկապի սխեմայի բազմակողմանիության հանրամատչելի բացատրությունը (միկողմանի կապ, երկկողմանի ազատ ռադիոցանցի սկզբունքով և այլն)։

Ռադիոկապին վերաբերվող հիմնական պահանջները օպերատիվային արվեստի տեսակետից։ Ռադիստի օպերատիվային կայունությունը (լուրջ ուշադրություն, համառություն, սառնարյունություն և այլն), կարգապահություն խոսակցության և ռադիոկայանների էֆիրային աշխատանքների ընթացքում։

Ռադիոգրերի գաղտնապահություն։ Ռադիոկապի քողարկում։ Ռադիոգրերի փոխանակություն կատարող օպերատորի կարգապահություն (ռադիոկայանի գույքի պաշտպանություն, ապարատային ժուրնալի ուշադիր վարումը, փաստաթղթերի պահպանություն և այլն)։

2-ՐԴ ԴԱՍ.— Ներածական զրույցի շարունակությունը, Մորզեի այբուբենը (պատմական ակնարկ)։ Տառերի, թվերի և օժանդակ ազդանշաններ կազմելու հնչունային մեթոդը, բանալին և նրա կառուցվածքը, կարգավորումը, աշխատանքի պատրաստելը։ Բանալու վրա աշխատելու համար նստելու կանոնները։ Մատների դիրքը բանալու գլխիկի վրա։ Տոնայ մեթոդի էությունը։ Մորզեի այբուբենի ազդանշանների հարաբերությունը, կետի, տիրեի տևողությունը, տառերի, թվերի, խոսքերի միջև ընկած տարածությունը և այլն։

Համահնչյուն այբուբենական տառերի աղյուսակը։

3-ՐԴ ԴԱՍ.— Նստելու կանոնների կրկնություն։ Բանալին բռնելու կանոնների կրկնություն։ Կետերի անընդմեջ հաջորդականության հաղորդման տակտի վերլուծումը։

Տակտի խախտման օրինակները։ Առաջին վարժություն— կետ։

4-ՐԴ ԴԱՍ.— Տիրեի ռիթմական հաղորդման վերլուծությունը, ձեռքի դաստակի հավասարաչափ—սահուն շարժումը։ Ռիթմի խախտման օրինակներ։ Երկրորդ վարժություն՝ տիրե (անընդհատ հաջորդվող տարրերով)։ Առաջին վարժության կրկնություն։

5-ՐԴ ԴԱՍ.— Կետից և տիրեից կազմված Մորզեի էլեմենտների ռիթմական հաղորդման վերլուծումը։ Տակտի խախտման օրինակներ։



Երրորդ վարժություն— կետ-տիրե, երկու կետեր— տիրե, երեք կետեր— տիրե, չորս կետեր— տիրե (а, у, ж, 4)։

6-ՐԴ ԴԱՍ.— 3—5-րդ դասերի քաղվածքներից կրկնողություն։ Ազդանշանների ընդհատում, կարճացում և երկարացում առաջ բերող պատճառների ուսումնասիրում։ Չորրորդ վարժություն (н, д, б, 6)։

7-ՐԴ ԴԱՍ.— Ելնող կետերի և տիրեների շարքի ռիթմային մշակումը։

5-րդ վարժություն (е, и, с, х, 5, т, м, о, ш, 0)։ Դադարի պահպանություն։

8-ՐԴ ԴԱՍ.— 6-րդ վարժություն (5, 6, 6, 7, 5, 6, 4, х, б, ж, с, д, у, и, н, а, е, т, я). այս վարժությունների կոմբինացիա։ Տակտի խախտման օրինակներ։ Աղավաղումների վերլուծում։

9-ՐԴ ԴԱՍ.— 7-րդ վարժություն։ Տառեր և թվեր (0, 9 ш, ч, й, о, г, в, м, н, а).

10-ՐԴ ԴԱՍ.— Կրկնողություն 1—9-րդ վարժություններից։ Ձեռքը բանալու վրա դնելու համրագումարային վերլուծություն։ Ստուգել հաղորդման սկզբնական կանոններին տիրապետելու յուրացման աստիճանը։

## Ընդունում լսողությամբ— 10 ժամ

11-ՐԴ ԴԱՍ.— Ծանոթություն տառերի հնչունային պատկերումների հետ՝ Մորզեի աղյուսակի համահնչուն զույգերում։

Լսողությամբ ընդունման սկզբնական կանոնների մեթոդական ցուցմունքներ (գրում, արագագրություն, լսվող ազդանշանները տառերի վերածելու տեխնիկան և այլն)։

*12-ՐԴ ԴԱՍ.— Համահնչուն տառերի սկզբունքների թռուցիկ կրկնություն։* е, т, и, а *տառերի լսողությամբ ընդունման վարժություն։*

*13-ՐԴ ԴԱՍ.— Լսողությամբ ընդունման ժամանակ գրելու սկզբնական կանոնների թռուցիկ կրկնություն։* д, к, б, ь *տառերի լսողությամբ ընդունման վարժություն։*

*14-ՐԴ ԴԱՍ.—* р, в, л, я *տառերի վրա վարժություններ։ Օժանդակ ազդանշաններ՝ հաղորդումն սկսելու նշան, անջատման նշան, վերջ։*

*15-ՐԴ ԴԱՍ.— Առաջին ամսում անցածի կրկնություն։* е, т, и, а, д, к, б, ь, р, в, л, я *տառերի վարժություն։ Օժանդակ սիգնալներ։ Կետադրական նշաններ, ստորակետ։*

Ծանոթություն.— *Տառերի մշակումն ուղեկցվում է հաղորդման պարբերական արագացումով։*

## *ՈՒՍՄԱՆ 2-ՐԴ ԱՄԻՍ*

Բանալու վրա հաղորդում 10 ժամ, լսողությամբ ընդունում 20 ժ.

*16-ՐԴ ԴԱՍ.—* Հաղորդում բանալու վրա։ *7-րդ վարժություն (ավելացվում է «1» թվանշանը)։ Ութերորդ վարժություն— անջատման նշան, 6, կոտորակային գիծ,* к, у, ы, ш*։ Ռիթմի ստուգում։ Մատների դրվածքը բանալու վրա։ Աշխատողի մարմնի դիրքը։*

*17-ՐԴ ԴԱՍ.—* Ընդունում լսողությամբ։ *Վարժություններ.—* р, в, л, я *տառերի վրա։ Օժանդակ ազդանշաններ. անհավասար զարկ (պերեբոյ), լրիվ վերջ, բացականչության նշան։*

18-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ *Կրկնու-*



*թյուններ 1—8 վարժություններից։ Դադար տառերի, տառային խմբերի միջև։*

*19-ՐԴ ԴԱՍ.—* Ընդունում լսողությամբ։ *Վարժություններ* з, щ, ч, ш, н, м *տառերի վրա։*

*20-ՐԴ ԴԱՍ.—* Հաղորդում բանալու վրա։ *9-րդ վարժություն, թվեր և տառեր (*ф, р, л, п, ю, з*, 2, 3, 7, 8, երկու կետ)։ Ռիթմի խախտման օրինակներ։*

*21-ՐԴ ԴԱՍ.—* Ընդունում լսողությամբ։ р, в, л, я, з, щ, ч, ш, н, м *տառերի վարժությունից կրկնություններ։*

22-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ 7—9-րդ *վարժություններից կրկնություն։*

*23-ՐԴ ԴԱՍ.—* Ընդունում լսողությամբ։ ц, ы, г, о, п, й *տառերի վրա վարժություններ։ Օժանդակ ազդանշաններ. հարցական նշան, համար, կոտորակային գիծ։*

*24-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ 3—9-րդ վարժությունների կրկնողական մշակում։*

*25-ՐԴ ԴԱՍ.— Ընդունում լսողությամբ։ 21, 23 դասերի նյութերի շարունակություն։*

*26 և 27-ՐԴ ԴԱՍԵՐ.—* Ընդունում լսողությամբ։ *Վարժություն* с, у, ф, ю, х, ж *տառերի վրա։*

*28, 29 և 30-ՐԴ ԴԱՍԵՐ.—* Ընդունում լսողությամբ.— *17, 19, 21, 23, 26 դասերում անցած նյութերի կրկնություն։*

## ՈՒՍՄԱՆ 3-ՐԴ ԱՄԻՍ

Ընդունում լսողությամբ— 15 ժամ։
Հաղորդում բանալու վրա— 15 ժամ

*31-ՐԴ ԴԱՍ.—* Հաղորդում բանալու վրա։ *Վարժու-*

թյուն թվերը խմբերով հաղորդման վարժություն (հինգանիշ)։ Հսկողություն բանալու վրա ձեռքի դրվածքի և հաղորդման ռիթմի վրա։

32-ՐԴ ԴԱՍ.— Ընդունում լսողությամբ։ Համահընչյուն զույգերով տառերի անցման կրկնությունների ավարտում։ Տառերի ընդունում խմբերով։ Անցած օժանդակ ազդանշանների և կետադրության նշանների կրկնություն։

33-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ 31-րդ դասի շարունակությունը։ Առանձին թվերի հաղորդման հսկողություն՝ հիշողությամբ։

34-ՐԴ ԴԱՍ.— Ընդունում լսողությամբ։ Վարժություն տառերն առանց գրելու բերանացի կարդալու մեջ, նույնը և բառերի, օժանդակ ազդանշանների և կետադրության նշանների։

35-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ Վարժություն—տառերը խմբերով, բառերը, անջատման նշաններ հաղորդման մեջ։

36-ՐԴ ԴԱՍ.— Ընդունում լսողությամբ։ 32-րդ դասի շարունակություն։

36 ա ԴԱՍ.— Ընդունում լսողությամբ։ 32-րդ դասի շարունակություն։

37-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ Վարժական կրկնություններ օժանդակ ազդանշանների և կետադրության նշանների կրկնակի հաղորդման, խառը բովանդակությամբ (ուսումնական պրակտիկայի համար)։

38, 39, 40-րդ ԴԱՍԵՐ.— Դաս-զրույց— ռադիոկորեսպոնդենցիայի տարրական կանոնների վերլուծում, ռադիոգրերի վերնագրեր։ Ծանոթացում լատինական այբուբենի հետ։ Պարզագույն քաղվածքներ ժարգոնից, կոդերից։

41 և 42-ՐԴ ԴԱՍ.— Դաս-զրույց՝ 38—40 դասերի կրկնությունը բանալու վրա հաղորդելու թեքումով։

43-ՐԴ ԴԱՍ.— Հաղորդում բանալու վրա։ Բազմատեսակ բնագրեր (վերադարձ, խառը)։

43 ա ԴԱՍ.— Բնագրերի ընդունում լսողությամբ, հաղորդում բանալու վրա։

## ՈՒՍՄԱՆ 4-ՐԴ ԱՄԻՍ

Ընդունում լսողությամբ— 10 ժամ։
Հաղորդում բանալու վրա 5 ժ.

44, 45, 46, 47-ՐԴ ԴԱՍԵՐ.— Ընդունում լսողությամբ։ Վարժություններ տեքստերով և բնագրերով (հաջորդաբար)։ Կրկնություններ 38—40-րդ դասերից։ Ընդունումը կարդալ բերանացի, առանց գրելու։

48, 49, 50-ՐԴ ԴԱՍԵՐ.— Հաղորդում բանալու վրա։ Վարժություններ թվերով և տեքստերով (հաջորդաբար)։ Կրկնություններ 41—42-րդ դասերից։ Տեքստի հաղորդում հիշողությամբ։

Ծանոթություն.— 1. Վարժությունների մշակումը բանալու վրա տանել սիստեմատիկորեն հնչունային (տոնային) մեթոդով (դասատուի բանալու ներքո)։

Ծանոթություն.— 2. 47 և 50-րդ դասերը քննական են հանդիսանում։

## ՀԱՎԵԼՎԱԾ

**Ուսման ժամերի բաշխումն ըստ ծրագրի առաջին կոմպլեքսի հիմնական բաժինների:**

| Ամիսը | Ընդամենը լսողությամբ | Հաղորդում բանալու վրա |
|---|---|---|
| I | 10 | 20 |
| II | 20 | 10 |
| III | 15 | 15 |
| IV | 10 | 05 |
| Ընդամենը | 55 | 50 |

**Արագությունը ստուգող մոտավոր աղյուսակ**

| Ամիս | Տեքստի նշաններով | | Թվեր (խմբերով) | |
|---|---|---|---|---|
| | Ընդունում | Հաղորդում | Ընդունում | Հաղորդում |
| | 20 | — | — | — |
| II | 25 | 20 | 4 | 4 |
| III | 30 | 30 | 6 | 6 |
| IV | 40—50 | 40—50 | 8 | 8 |

**Ծանոթություն.**— *1. Ամեն մի խումբ կազմված է լինում 5 նիշերից:*



*2. II կոմպլեքսի լսողներ պատրաստելը հիմնականում տարվում է այս նույն ծրագրով, սկսած 5-րդ դասից: Արագությունն ստուգող աղյուսակը վերակազմվում է մինչև 60 տառ մեկ րոպեում:*

*3. II կոմպլեքսի վարժական ռադիոգրամների տեքստը կազմվում է ինքնուրույն և հաղորդվում է առաջադիմության համապատասխան արագությամբ:*

ՀՀ Ազգային գրադարան
NL0277428

9662

ПРОГРАММА
по изучению приема на слух и передачи на ключе
для радиолюбительских кружков.
Радиокомитет при СНК Арм. ССР, Ереван 1940 г.

Туркменистан довлет китапханасы
Туркменская государственная библиотека
им. Карла Маркса